

նենք որ երկրիս ներսի դիէն միակերպ
գողորշիքներ ու կազեր դուրս կը ցըն-
դին . որ ըսել է թէ երկրիս մէջ շատ
հեղանիւթներու աղբիւրներ կան . և
աս նիւթերը՝ շատ անգամ՝ ինչուան
երկրիս երեսը ճեղք մը կամ ծակ մը
չգտնելով՝ երկրիս խոր տեղուանքը կը
ժողովին , ու հոն տաքութենէ ընդար-
ձակելով՝ վրայի հողը գէպի վեր կը
հրեն ու կը բարձրացընեն . անով կը
ձևանան լեռները . երբեմն ալ անոնց
վրայէն ծակ բանալով դուրս կը վա-
զեն , որով հրաբուխի լեռ կը ձևա-
նայ . իսկ թէ որ առանց հողը շատ
վեր հրելու՝ գետինը ասդիէն անդիէն
պատռտեն ու անանկ դուրս վազեն
տաք նիւթերը , մեծամեծ խողովներ
կը ձևանան . շատ անգամ աս տեսակ
խողովները երկրիս ներսի դիէն բա-
ցուելով՝ սաստիկ գետնաշարժներ ալ
կը պատահին : 1759^{ին} Մեքսիկա Մեք-
սիքոյի մէջ սաստիկ շարժով գետինը
քանի մը տեղէն պատռելէն վերջը՝
բաւական ընդարձակութեամբ երկիր
մը 500 ոտնաչափ գետնէն վեր ցցուե-
ցաւ . ասկէ զատ՝ նաև նոր հրաբուխ մը
ելաւ , որուն հիմա Լօրուլլոյ կ'ըսեն :
1822^{ին} նոյնպէս Մեքսիկա Վիլի մէջ
սոսկալի գետնաշարժով շատ քաղաք-
ներ գետինն անցնելէն վերջը , տեսան
որ մեծ ընդարձակութեամբ երկիր մը
զգալի կերպով վեր բարձրացեր է :
Լյուպիսի յայտնի ապացոյցներէ կը
հաստատուի թէ լեռներու մեծամեծ
գօտիններն ալ քանի մը հազար տարի
առաջ կեդրոնական ջերմութենէ ու
գետնաշարժէ ձևացած են . բայց ո-
րովհետեւ հիմա կեդրոնական ջերմու-
թիւնը շատ պաղած է , ու բաւական
բանուկ հրաբուխներ կան , անոր հա-
մար ան աստիճան սաստիկ շարժեր
չեն պատահիր , ու մեծամեծ լեռներ
չեն ելլեր : Լեռներուն գետնաշարժէ
ու կեդրոնական ջերմութենէ առաջ
եկած ըլլալուն մէկ յայտնի նշանն ալ
աս է , որ նոյն գօտիններուն մօտերը

գտնուած հողի կարգերը փոխանակ
վրայէ վրայ շիտակ կեցած ըլլալու՝
տակն ու վրայ եղած են . բայց ուր
տեղուանքն որ լեռները բարձրանա-
լէն ետեւ հողերուն կարգերը ձևացեր
են՝ հոն նոյն խառնակութիւնը չտես-
նուիր :

Հ . Տ . Թ

ՎԵՐՏԱՌՈՒԹԻՒՆ

Փոփոխութիւն Բաղաւոր :

ԲԱՂԻ ԸԳԳՐՈՒՄ քով գեղերի միշտ . ընդեր .
Ձի գիւրաշուրջ քան զայն անիւ գլտեալ չէր :

Խառնար :

Ի մատենից մուրաս հանձար
Ձի յայտնեցիս քաջ գոլ ախմար :

Կալաւորութիւն Դաւաւոր :

ԸԶԻՐԱՅՈՒԹԻՒՆ քո հարկանէն 'ի բողոք .
ԱՂ ևս ոսկւով մերձեալ դրոյի ցքեղ ողոք :

ՀԱՆԵԼՈՒԿ

Նոր ժամացոյց մի տեսի ,
Ոչ զանկ ունէր ոչ անիւ .
Տըղայն յուսով կունայէր ,
Ծերըն ցաւով երկիւղիւ :

ՄԱՅԻՍԻ ՀԱՆԵԼՈՒԿԸ ԵՐ ՀԱՅ :